ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

Փամբակ համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 14-ի հերթական նիստի.

գ. Փամբակ Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Սուրեն Կոստանդյանը:

Մասնակցում էին՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սուրեն Կոստանդյանը, Սամվել Անանյանը, Էմմա Գասպարյանը, Պավլիկ Պապինյանը, Արշակ Սրապյանը, Արմենուհի Ոսկանյանը, Արայիկ Քոչարյանը, Գրիգոր Կարապետյանը, և Շուշանիկ Հակոբյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սասուն Մարանդյանը, Նաիրա Հարությունյանը:

Նիստից բացակայում էին.

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ Սևակ Խաչատրյանը և Թիանա Բոջուկյանը՝ հարգելի պատճառներով:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամ Սերյոժա Սարդարյանը և Աշոտ Անտինյանը՝ հարգելի պատճառներով:

ՆԻՍՏԸ - Նիստը վարող Սուրեն Կոստանդյանը ժամը 13.00-ին նիստը հայտարարեց բացված:

Նիստը վարողն իր նախաձեռնությամբ առաջարկեց օրակարգի մեջ ներառել և քվեարկել որպես լրացուցիչ 4-8-րդ հարցեր և որոշման նախագծեր հետևյալ բովանդակությամբ.

4. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքով օտարելուն և վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, մրցույթի և աճուրդի պայմանները հաստատելու մասին:
5. Փամբակ համայնքի գյուղական բնակավայրերի սահմանագծերը հաստատելու մասին:
6. Փամբակ համայնքի սեփականության 2022թ-ի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:
7. 06-070-0318-0009 կադաստրային ծածկագրով հողամասում երկրաբանական ուսումնասիրություն կատարելու մասին:
8. ,,Համայնքի ղեկավարները հանուն տնտեսական զարգացման,, ծրագրին անդամակցելու մասին:

Կողմ՝ 11 ձայների համաձայնությամբ որոշումների նախագծերն ընդգրկվեցին օրակարգում:

Նիստը վարողն առաջարկեց հաստատել օրակարգը լրացուցիչ որոշման նախագծերով:

Կողմ՝ 11, ընդունվեց որոշում:

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.

Հաստատված օրակարգը՝

1. Աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարների գանձման կարգը հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

2. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 12.05.2022թ-ի թիվ 57-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

3. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքով օտարելուն և վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, մրցույթի և աճուրդի պայմանները հաստատելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

4. Փամբակ համայնքի գյուղական բնակավայրերի սահմանագծերը հաստատելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

5. Փամբակ համայնքի սեփականության 2022թ-ի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

6. 06-070-0318-0009 կադաստրային ծածկագրով հողամասում երկրաբանական ուսումնասիրություն կատարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

7. ,,Համայնքի ղեկավարները հանուն տնտեսական զարգացման,, ծրագրին անդամակցելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

8. Փամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

ԸՆԹԱՑՔԸ՝

1. ԼՍԵՑԻՆ - Աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարների գանձման կարգը հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ համայնքում աղբահանությունը պետք է իրականացվի համայնքի ուժերով՝ ,,Փամբակ կոմունալ,, ՀՈԱԿ-ի կողմից: Համաձայն ,,Տեղական ինքնակառավարման մասին,, և ,,Աղբահանության և սանիտարական մաքրման մասին,, ՀՀ օրենքների աղբահանությունը պետք է իրականացվի կամաձայն ավագանու կողմից հաստատված կարգի: Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում:

2. ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 12.05.2022թ-ի թիվ 57-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով Փամբակ համայնքի ,,Վահագնաձորի մանկապարտեզ,, ՀՈԱԿ-ի տնօրենի ժ/պ-ի դիմումը, անհրաժեշտություն է առաջացել հաստիքացուցակում իրականացնել փոփոխություն, որը սակայն բյուջեի փոփոխության չի հանգեցնի: Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում:

3. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքով օտարելուն և վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, մրցույթի և աճուրդի պայմանները հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ բազմաթիվ քաղաքացիներ դիմել են հողամասեր գնելու առաջարկով, առկա են նշված հողակտորների համայնքային սեփականության վկայականները և համայնքի ավագանու համաձայնության դեպքում կիրականացվի հողամասերի աճուրդ և վարձակալությամբ տրամադրում:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում:

4. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի գյուղական բնակավայրերի սահմանագծերը հաստատելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 12 ընդունվեց որոշում:

5. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի սեփականության 2022թ-ի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտության, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում:

6. ԼՍԵՑԻՆ - 06-070-0318-0009 կադաստրային ծածկագրով հողամասում երկրաբանական ուսումնասիրություն կատարելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում:

7. ԼՍԵՑԻՆ - ,,Համայնքի ղեկավարները հանուն տնտեսական զարգացման,, ծրագրին անդամակցելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի Ռաիսա Մինասյանը:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում:

8. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին հարցի նախագիծը:
- Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Փամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օրը և առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել 2022 թվականի սեպտեմբերի 15-ը: Առաջարկը դրվեց քվեարկության:
Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում:
Փամբակի ավագանու հերթական նիստի օր նշանակել 2022 թվականի սեպտեմբերի 15-ը:
Նիստի սկիզբ սահմանվեց ժամը 13.00-ն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ
Ս. ԱՆԱՆՅԱՆ
Է. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Գ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պ. ՊԱՊԻՆՅԱՆ
Ա. ՍՐԱՊՅԱՆ
Ա. ՈՍԿԱՆՅԱՆ
Ա. ՔՈՉԱՐՅԱՆ
Շ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ՄԱՐԱՆԴՅԱՆ
Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, + 374 98661662, 77758863, pam-bak@mail.ru, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈՒՆԻՍԻ 2022թվականի N 77-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022Թ-Ի ՀՈՒՆԻՍԻ 14-Ի ԹԻՎ 08 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի և 16-րդ հոդվածի դրույթներով՝ Փամբակ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2022թ-ի հունիսի 14-ի թիվ 08 հերթական նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

,, 14 ,, հունիսի 2022թ-ի թիվ 08 հերթական նիստի

1. Աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարների գանձման կարգը հաստատելու մասին:
2. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 12.05.2022թ-ի թիվ 57-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
3. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքով օտարելուն և վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, մրցույթի և աճուրդի պայմանները հաստատելու մասին:
4. Փամբակ համայնքի գյուղական բնակավայրերի սահմանագծերը հաստատելու մասին:
5. Փամբակ համայնքի սեփականության 2022թ-ի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:
6. 06-070-0318-0009 կադաստրային ծածկագրով հողամասում երկրաբանական ուսումնասիրություն կատարելու մասին:
7. ;;Համայնքի ղեկավարները հանուն տնտեսական զարգացման,, ծրագրին անդամակցելու մասին:
8. Փամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԲԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

2022թ. հունիսի 14
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, + 374 98661662, 77758863, pam-bak@mail.ru, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈՒՆԻՍԻ 2022թվականի N 78-Ա

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 30.1-րդ և 33-րդ կետով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով՝ Փամբակ համայնքի ավագանին"

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Հաստատել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի տարածքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

2022թ. հունիսի 14
գ. Փամբակ

Հավելված
Փամբակ համայնքի ավագանու
2022 թվականի հունիսի 14-ի թիվ 78-Ա որոշման

ԿԱՐԳ

ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԴ ՎՃԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով (այսուհետ՝ կարգ) կարգավորվում են Փամբակի ամայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման հետ կապված հարաբերությունները:

2. Աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման համար հիմք է հանդիսանում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածին համապատասխան՝ աղբահանության վճարի դրույքաչափերը սահմանելու մասին Փամբակ համայնքի ավագանու որոշումը:

3. Սույն կարգով չեն կարգավորվում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի «ե» կետով սահմանված շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվություններ տալու հետ կապված հարաբերությունները:

II. Աղբահանության վճար վճարողների հաշվառումը

4. Աղբահանության վճար վճարողներ են հանդիսանում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված անձինք:

5. Աղբահանության վճարողների հաշվառումն իրականացվում է վճարողների գրանցման մատյանում գրանցելու միջոցով: Վճարողների գրանցամատյանը պետք է վարվի նաև համապատասխան համակարգչային ծրագրով:

6. Աղբահանության վճարողների հաշվառումն իրականացնում են ,,Փամբակ կոմունալ,, ՀՈԱԿ-ի աշխատակիցները և (կամ) Փամբակ համայնքի ավագանու որոշմամբ նման լիազորություններով օժտված օպերատորը կամ այլ կազմակերպությունը (կազմակերպությունները):

III. Աղբահանության վճարի հաշվարկումը

7) Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը սահմանվում է .

7.1) Բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական՝ 100 մեկ հարյուր ՀՀ դրամ:

7.2) Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

ա. առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով ամսեկան՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 70 յոթանասուն ՀՀ դրամ.

բ. Հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների), հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համարա մսեկան՝ 30 երեսուն ՀՀ դրամ.

գ. վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար ամսեկան՝ 20 քսան ՀՀ դրամ.

դ. գիտական, կրթականևուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 5 հինգ ՀՀ դրամ, իսկ զորանոցների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 8 ութ ՀՀ դրամ.

ե. արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար ամսեկան՝ 10 տաս ՀՀ դրամ.

զ. շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր հատվածի համար՝ ըստ տվյալ հատվածում իրականացվող գործունեության տեսակի, համաձայն սույն ենթակետի 1-5-րդ պարբերություններով սահմանված դրույքաչափերի, եթե աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին գրավոր տեղեկացնում է ,,Կոմունալիամայնքի ղեկավարին՝ կցելով նշված հատվածների մակերեսների նշումով սխեման,
իսկհամայնքիղեկավարինչտեղեկացնելուդեպքումհաշվարկվում է 7.2) կետի ա-ե ենթակետերովսահմանվածդրույքաչափով.

7.3) Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար ամսեկան՝ 50 հիսուն ՀՀ դրամ:

7.4) Ոչ կենցաղային աղբի համար, ինչպես նաև ոչ բնակելի տարածքների վերաբերյալ սույն հավելվածի 7)-րդ մասի 7.2) կետով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճարը սահմանվում է՝

. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3000 երեք հազար Հայաստանի Հանրապետության դրամ, կամ

. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 10000 տասը հազար Հայաստանի Հանրապետության դրամ.

. ոչ բնակելի նպատակային նշանակության շենքի և (կամ) շինության սեփականատերը անհամաձայնության մասին գրավոր ներկայացնում է համապատասխան համայնքի ղեկավարին ՝ աղբահանության ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում: Վճարի վերահաշվարկը կատարվում է ճշգրտված տեղեկությունների ներկայացման ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

IV. Աղբահանության վճարի հաշվարկումը և գանձումը

8. Աղբահանության վճարի հաշվարկումը և գանձումը իրականացվում են ,,Փամբակ կոմունալ,, ՀՈԱԿ-ի աշխատակիցների կողմից (այսուհետ՝ գանձող):

9. Համակարգողն իրականացնում է գանձողի կողմից գանձված անդորրագրերի ընթացիկ հաշվառման, համադրման, անդորրագրերի մնացորդների և հայտի դեպքում՝ անդորրագրերի նոր խմբաքանակների տրամադրման աշխատանքները:

10. Գանձողը համակարգողից ստանալով անդորրագրերը, իրականացնում է անդորրագրերի պահպանման և ընթացիկ հաշվառման այլ աշխատանքներ:

11. Գանձողը պարտավոր է տվյալ օրվա գանձված գումարը եռօրյա ժամկետում բանկային կամ փոստային համակարգի միջոցով գումարը փոխանցել համապատասխան հաշվին, իսկ անդորրագրերը՝ մինչև նույն աշխատանքային օրվա ավարտը, մուտքագրել տվյալների հաշվառման շտեմարան: Գանձված անդորրագրերի երկրորդ օրինակը՝ համապատասխան ամփոփագրով, գանձողը պարտավոր է հանձնել համակարգողին՝ մինչև գանձված գումարի փոխանցման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը:

12. Փամբակ համայնքի ավագանու որոշմամբ աղբահանության վճարի հաշվառման և գանձման լիազորություններով օժտված օպերատորը կամ այլ կազմակերպությունը (կազմակերպությունները) Փամբակի համայնքապետարանին է ներկայացնում ամսական տեղեկատվություն՝ հաշվետու ժամանակաշրջանում իր կողմից աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման գործառույթների իրականացման արդյունքների (հաշվետվություն) վերաբերյալ:

V. Աղբահանության վճարի հաշվարկման և վճարման ժամկետները

13. Աղբահանության վճարի հաշվարկման հաշվետու ժամանակահատված է համարվում օրացուցային ամիսը, իսկ վճարման ժամկետը յուրաքանչյուր ամսվա համար՝ տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:

14. Աղբահանության վճարի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տվյալ ամսվան հաջորդող ամսվա 1-ից ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար աղբահանության վճար վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված աղբահանության վճարի գումարի 0.15 տոկոսի չափով, դրանց վճարման ժամկետի ցանցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 180 օրվա համար:

VI. Այլդրույթներ

15. Աղբահանության վճար վճարողների գրանցման մատյանի, աղբահանության վճարի կանխիկ վճարումների ընդունման ամփոփագրի, աղբահանության վճարի գանձման գործառույթների իրականացման վերաբերյալ հաշվետվության, ինչպես նաև սույն կարգի պահանջների նկատմամբ հսկողություն իրականացնելու համար անհրաժեշ տայլ փաստաթղթերի ձևերը հաստատվում են ,,Փամբակ կոմունալ,, ՀՈԱԿ-ի տնօրենի կողմից:

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, + 374 98661662, 77758863, pam-bak@mail.ru, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈՒՆԻՍԻ 2022թվականի N 79-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 12.05.2022Թ-Ի ԹԻՎ 57-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 33-րդ հոդված 1-ին մասի 3-րդ կետով, 37-րդ հոդվածով՝ Փամբակ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 12.05.2022թ-ի ,,Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի բնակավայրերում գործող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին,, թիվ 57-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշման 5-րդ հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

2022թ. հունիսի 14
գ. Փամբակ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի
Փամբակ համայնքի ավագանու
2022թ-ի հունիսի 14-ի N 79-Ա որոշման

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ,,ՎԱՀԱԳՆԱՁՈՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՅԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Աշխատակիցների թվաքանակը՝ 9:

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔ ԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար)	ԱՄՍԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՖՈՆԴ
1	Տնօրեն	1	130000	130000
2	Հաշվապահ	0,5	110000	55000
3	Դաստիարակ	1.12	100000	112000
4	Դաստիարակ /Անտառամուտ բնակավ./	1.12	100000	112000
5	Դաստիարակի օգնական	1	95000	95000
6	Խոհարար	1	95000	95000
7	Տնտեսվար	0,25	100000	25000
8	Օժանդակ բանվոր	0,25	95000	23750
	Ընդամենը	**6,24**		**647750**

Փամբակ համայնքի ղեկավար՝ Ա. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, + 374 98661662, 77758863, pam-bak@mail.ru, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈՒՆԻՍԻ 2022թվականի N 80-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ, ՄՐՑՈՒՅԹԻ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ,,Հողային օրենսգրքի,, 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 67-րդ, 68-րդ հոդվածներով, ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ,,Հրապարակային սակարկությունների մասին,, ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 12.04.2001թ-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը՝ Փամբակ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Տալ համաձայնություն Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքով օտարելուն և վարձակալության իրավունքով տրամադրելուն:

2. Աճուրդ-վաճառքով օտարվում են բնակավայրերի հասարակական կառուցապատման և գյուղատնտեսական նշանակության հողատեսքեր 7 լոտով.

-Լոտ 1: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-034-0039-0007 ծածկագրով 0,03 հա բնակավայրերի այլ հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 60000 /վաթսուն հազար/ ՀՀ դրամ:

-Լոտ 2: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-034-0115-0011 ծածկագրով 0,20291 հա գյուղատնտեսական այլ հողատեսք: Մեկնարկային գինը սահմանել 90000 /իննսուն հազար/ ՀՀ դրամ:

-Լոտ 3: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-034-0037-0007 ծածկագրով 0,01840 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 37000 /երեսունյոթ հազար/ ՀՀ դրամ:

-Լոտ 4: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-034-0132-0041 ծածկագրով 0,4375 հա գյուղատնտեսական նշանակության 2-րդ կարգի խոտհարք: Մեկնարկային գինը սահմանել 525000 /հինգ հարյուր քսանհինգ հազար/ ՀՀ դրամ:

-Լոտ 5: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-066-0117-0097 ծածկագրով 0,120373 հա գյուղատնտեսական նշանակության 1-ին կարգի արոտավայր: Մեկնարկային գինը սահմանել 120000 /մեկ հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ:

-Լոտ 6: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-103-0072-0033 ծածկագրով 0,0086 հա գյուղատնտեսական այլ հողատեսք: Մեկնարկային գինը սահմանել 4000 /չորս հազար/ ՀՀ դրամ

-Լոտ 7: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-103-0074-0007 ծածկագրով 0,010567 հա գյուղատնտեսական այլ հողատեսք: Մեկնարկային գինը սահմանել 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ:

-Լոտ 8: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-070-0244-0073 ծածկագրով 0,052151 հա գյուղատնտեսական վարելահող 4-րդ կարգ: Մեկնարկային գինը սահմանել 105000 /մեկ հարյուր հինգ հազար/ ՀՀ դրամ:
-Լոտ 9: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-102-0010-0015 ծածկագրով 0,167018 հա բնակավայրերի այլ հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 240000 /երկու հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ:
-Լոտ 10: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-102-0041-0067 ծածկագրով 0,574765 հա գյուղատնտեսական այլ հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 230000 /երկու հարյուր երեսուն հազար/ ՀՀ դրամ:

Աճուրդի լոտի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50 տոկոսի չափով, նվազագույն քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

3. Վարձակալության իրավունքով, գյուղ. գործունեություն ծավալելու նպատակով, 25 տարի ժամկետով տրամադրվում է գյուղատնտեսական նշանակության հողամասեր 5 լոտով.
-Լոտ 1: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-070-0336-0047 ծածկագրով 2.62452 հա գյուղատնտեսական նշանակության 5-րդ կարգի խոտհարք: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 30000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ:
-Լոտ 2: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-041-0201-0093 ծածկագրով 1,67571 հա, գյուղատնտեսական նշանակության 3-րդ կարգի արոտավայր: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 12000 /տասներկու հազար/ ՀՀ դրամ:
-Լոտ 3: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-041-0201-0094 ծածկագրով 0.10354 հա, գյուղատնտեսական նշանակության 3-րդ կարգի արոտավայր: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 2000 /երկու հազար/ ՀՀ դրամ:
-Լոտ 4: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-070-0351-0007 ծածկագրով 0,786299 հա գյուղատնտեսական նշանակության 5-րդ կարգի խոտհարք: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 10000 /տասը հազար/ ՀՀ դրամ:
-Լոտ 5: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-070-0354-0092 ծածկագրով 8.672430 հա գյուղատնտեսական նշանակության 5-րդ կարգի խոտհարք: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 80000 /ութանասուն հազար/ ՀՀ դրամ:
Վարձակալության մրցույթի լոտի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, նախավճարի և նվազագույն քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

4. Համայնքի ղեկավար Ս. Կոստանդյանին՝ ապահովել աճուրդով վաճառվող և վարձակալությամբ հատկացվող հողամասերի հայտարարության հրապարակային ծանուցումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

2022թ. հունիսի 14
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, + 374 98661662, 77758863, pam-bak@mail.ru, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈՒՆԻՍԻ 2022թվականի N 81-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ և 30-րդ կետերով, ՀՀ հողային օրենսգրքի 11-րդ հոդվածով, Փամբակ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Փամբակ համայնքի գյուղական բնակավայրերի սահմանագծերը հաստատելու մասին, Փամբակ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի Ազնվաձոր գյուղի բնակավայրի սահմանագծերը համաձայն N-1 հավելվածի:
2. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի Անտառամուտ գյուղի բնակավայրի սահմանագծերը համաձայն N-2 հավելվածի:
3. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի Արջուտ գյուղի բնակավայրի սահմանագծերը համաձայն N-3 հավելվածի:
4. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի Բազում գյուղի բնակավայրի սահմանագծերը համաձայն N-4 հավելվածի:
5. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի Դեբետ գյուղի բնակավայրի սահմանագծերը համաձայն N-5 հավելվածի:
6. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի Եղեգնուտ գյուղի բնակավայրի սահմանագծերը համաձայն N-6 հավելվածի:
7. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի Լեռնապատ գյուղի բնակավայրի սահմանագծերը համաձայն N-7 հավելվածի:
8. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի Լեռնաջուր գյուղի բնակավայրի սահմանագծերը համաձայն N-8 հավելվածի:
9. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի Ձորագյուղ գյուղի բնակավայրի սահմանագծերը համաձայն N-8 հավելվածի:
10. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի Ձորագետ գյուղի բնակավայրի սահմանագծերը համաձայն N-10 հավելվածի:
11. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի Մարգահովիտ գյուղի բնակավայրի սահմանագծերը համաձայն N-11 հավելվածի:
12. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի Վահագնաձոր գյուղի բնակավայրի սահմանագծերը համաձայն N-12 հավելվածի:

13. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի Վահագնի գյուղի բնակավայրի սահմանագծերը համաձայն N-13 հավելվածի:
14. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի Փամբակ գյուղի բնակավայրի սահմանագծերը համաձայն N-14 հավելվածի:
15. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի Քարաբերդ գյուղի բնակավայրի սահմանագծերը համաձայն N-15 հավելվածի:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

2022թ. հունիսի 14
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, + 374 98661662, 77758863, pam-bak@mail.ru, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈՒՆԻՍԻ 2022թվականի N 82-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի և 77-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով՝ Փամբակ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հաստատել Փամբակի համայնքապետարանի և նրա ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների սեփականության 2022թ-ի գույքագրման փաստաթղթերը՝ /կցվում են կազմված գույքագրման ցուցակները/:
2. Գույքագրման ընթացքում պակասորդ և ավելցուկ չի հայտնաբերվել:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

2022թ. հունիսի 14
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, + 374 98661662, 77758863, pam-bak@mail.ru, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈՒՆԻՍԻ 2022թվականի N 83-Ա

06-070-0318-0009 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ,,Հողային օրենսգրքի,, 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 67-րդ, 68-րդ հոդվածներով, ,,Տեղական Ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ,,Ընդերքի մասին,, ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 18-րդ կետով, ՀՀ կառավարության 12.04.2001թ-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը՝ Փամբակ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Տալ նախնական համաձայնություն ,,Համզաչիման էկո,, ՍՊԸ-ին համայնքային սեփականություն հանդիսացող 06-070-0318-0009 կադաստրային ծածկագրով 1.986548 հա հողամասում տորֆի հանքավայրի երկրաբանական ուսումնասիրություն կատարելու համար:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

2022թ. հունիսի 14
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, + 374 98661662, 77758863, pam-bak@mail.ru, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈՒՆԻՍԻ 2022թվականի N 84-Ա

,,ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ ՀԱՆՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ,, ԾՐԱԳՐԻՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ Փամբակ համայնքի ղեկավարի անդամակցության հայտը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Հաստատել Փամբակ համայնքի ղեկավար Սուրեն Տիգրանի Կոստանդյանի անդամակցությունը ,,Համայնքի ղեկավարները հանուն տնտեսական զարգացման,, (ՀՀՏԶ) նախաձեռնությանը:

Դեմ -0 Ձեռնպահ -0

Կողմ -11
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

2022թ. հունիսի 14
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, + 374 98661662, 77758863, pam-bak@mail.ru, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈՒՆԻՍԻ 2022թվականի N 85-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Փամբակ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Փամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օր նշանակել 2022թ-ի սեպտեմբերի 15-ին ժամը 13.00-ին:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

2022թ. հունիսի 14
գ. Փամբակ